

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐՏԱՇԵՍ ԱՐՏԱՎԱԶԴԻ ԽԱԼԱԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՁԵՎԻ ԷՎՈԼՅՈՒՑԻԱՅԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

**ԺԲ.00.01 – «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն,
պետական և իրավական ուսմունքների պատմություն»
մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2024

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ХАЛАТЯН АРТАШЕС АРТАВАЗДОВИЧ

**ПРОБЛЕМЫ ЭВОЛЮЦИИ ФОРМЫ ГОСУДАРСТВЕННОГО ПРАВЛЕНИЯ В
ТРЕТЬЕЙ АРМЯНСКОЙ РЕСПУБЛИКЕ**

АВТОРЕФЕРАТ

**диссертации на соискание ученой степени кандидата юридических наук
по специальности 12.00.01 – “Теория государства и права, история
политических и правовых учений ”**

ЕРЕВАН 2024

**Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ փոխոպայության,
սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտում**

Գիտական ղեկավար՝

իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Գառնիկ Հրաչիկի Սաֆարյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Հովհաննես Միքայելի Ստեփանյան
իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ
Վիկտորիա Ալեքսանդրի Օհանյան

Առաջատար կազմակերպություն՝ Հայ-ռուսական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2024 թվականի հոկտեմբերի 4-ին ժ. 14³⁰-ին ՀՀ ԲԿԳԿ-ի՝ Երևանի պետական համալսարանում գործող իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքված է 2024 թվականի սեպտեմբերի 3-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական

քարտուղար, իրավ. գիտ. թեկ., ասիստենտ  **Ժ. Ա. Ստեփանյան**

Тема диссертации утверждена в

Институте Философии, социологии и права НАН РА

Научный руководитель:

доктор юрид. наук, профессор
Сафарян Гарник Грачикович

Официальные оппоненты:

доктор юрид. наук, профессор
Степанян Микаел Оганнесович
кандидат юрид. наук, доцент
Оганян Виктория Александровна

Ведущая организация:

Российско-Армянский университет


Защита состоится 4 октября 2024 года в 14³⁰ часов на заседании Специализированного совета КВОН 001 по юриспруденции при Ереванском государственном университете (0025, г. Ереван, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки ЕГУ.

Автореферат разослан 3 сентября 2024 года.

Ученый секретарь специализированного совета:

кандидат юридических наук, ассистент



Ж. А. Степанян

ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի հետազոտության արդիականությունը. Հայաստանի Երրորդ Հանրապետության պատմության ավելի քան 25-ամյա շրջափուլում պետական կառավարման, պետաիշխանական բարձրագույն մարմինների կազմավորման, գործունեության, քաղաքական համակարգի հետ դրանց փոխ հարաբերության սահմանադրաիրավական հիմքերի առնչությամբ իրարամերժ դիրքորոշումները, դրանց իրացման գործընթացում գործնական բարդություններն անխուսափելիորեն ընդգծում են նշյալ հարցադրումների գիտական ուսումնասիրության, համալիր վերլուծության և ամբողջական լուծումներ առաջադրելու անհրաժեշտությունը: Ընդ որում, հիշյալ հարցադրումների առնչությամբ առկա պատկերացումները և հանրային ընկալումները ժամանակի ընթացքում ենթարկվում են վերանայման՝ կապված ներքին և արտաքին սոցիալական, իրավական և քաղաքական գործոնների և ազդեցությունների փոփոխման և զարգացման հետ:

Ըստ այդմ, աշխատության արդիականությունը պայմանավորված է Հանրապետության պետաիշխանական կառուցակարգերի էվոլյուցիայի գիտական ուսումնասիրման և արժևորման, պետական կառավարման ձևի՝ որպես համակարգի հարացույցի և այդ հարացույցի վրա ազդող համակարգաստեղծ գործոնների վերհաման օբյեկտիվ անհրաժեշտությամբ: Իսկ ավելի կոնկրետ՝ գիտական հետազոտության արդիականությունը պայմանավորված է գերազանցապես երկու խումբ գործոններով՝ տեսական-մեթոդական և գործնական:

Առաջին խումբ գործոնները հետևյալն են. Հայաստանի Երրորդ Հանրապետության պատմության ավելի քան 25-ամյա շրջափուլում պետական կառավարման, պետաիշխանական բարձրագույն մարմինների կազմավորման, գործունեության, փոխհարաբերության, քաղաքական համակարգի հետ դրանց փոխառնչակցության՝ սահմանադրական ամրագրում ստացած կառուցակարգերի վերաբերյալ հայրենական իրավական մշակույթում ձևավորված չեն միասնական պատկերացումներ, որոնց բազմազանությունն անհրաժեշտություն է առաջացնում ուսումնասիրել և վերլուծել դրանք՝ նպաստելու համար նշյալ սահմանադրաիրավական կառուցակարգերի վերաբերյալ գիտագործնական պատկերացումների որոշարկմանն ու համակարգմանը և դրա հիման վրա համապատասխան հայեցակարգերի և դոկտրինների ձևավորմանը:

Մասնավորապես, գտնում ենք, որ հայ իրավական և քաղաքական միտքը դեռևս միարժեքորեն չի ընդունում պետական կառավարման ձևի՝

որպես պետության ձևի առանցքային բաղադրատարրերից մեկի, ելակետա-
յին նշանակությունը Հայաստանի Երրորդ Հանրապետության պատմական
և քաղաքական շարժընթացի մասնագիտական մեկնաբանման և վերլու-
ծության համար: Պետաիրավական ինստիտուտների գիտական վերլուծո-
ւթյան ժամանակ հաճախ նկատվում է յուրաքանչյուր խնդրի կամ ինստիտուտի
մեկուսի դիտարկման միտում՝ առանց դրա համակարգային հատկանիշների
բավարար վերհանման և կարևորման: Մինչդեռ, կարծում ենք՝ պետաիրա-
վական ցանկացած ինստիտուտի ուսումնասիրման, դրա առավելություն-
ներն ու թերությունները ճշգրտորեն տարբերակելու և համապատասխան
լուծումներ ու հայեցակարգեր առաջարկելու համար խիստ կարևոր է դրանց
դիտարկումը որպես ամբողջի մաս, այն է՝ պետաիշխանական համակարգի
բաղկացուցիչ տարր: Այդպես առավել պարզ կդառնան ցանկացած պե-
տաիշխանական ինստիտուտի ծագումնաբանության և զարգացման հետա-
գիծը, ծառացած խնդրականներն ու մարտահրավերները: Ընդամին, վերլու-
ծությունը մեթոդաբանորեն ճիշտ և արդյունավետ իրականացնելու համար
կարևոր է նաև Հայաստանի պետաիշխանական համակարգի մոդելավոր-
ման ուսումնասիրությունը՝ շեշտը դնելով դրա զարգացման միտումների ի-
րավահամեմատական, էվոլյուցիոն և պատմաիրավական ուսումնասիրութ-
յան վրա: Նման ուսումնասիրության փորձ է հանդիսանում նաև սույն ատե-
նախոսությունը:

Բացի այդ, հատկապես քաղաքական պրակտիկայում և հանրային բա-
նավեճում ընդունված է պետական ինստիտուտների գործառնման հարցը
քննարկել գերազանցապես ընթացիկ քաղաքական իրողությունների պրիզ-
մայի ներքո՝ պետականության կառուցակարգային զարգացման գործընթա-
ցը կապելով անձնական-սուբյեկտիվ գործոնների հետ: Այդպիսի իրողութ-
յան պատճառներից մեկն այն է, որ ակադեմիական հարթակում պետական
կառավարման ձևի, դրա տեսակների, դրանց կազմակերպման և գործու-
նեության հիմքերի, Հայաստանի իրողությունների հաշվառմամբ՝ դրանց կի-
րառման առանձնահատկությունների, առավելությունների, թերությունների
և բացթողումների վերաբերյալ կատարված ուսումնասիրությունները մեծ
թիվ չեն կազմում և չունեն ռազմավարական բավարար ազդեցություն քա-
ղաքական պրակտիկայի և բանավեճի բովանդակության վրա: Սույն հան-
գամանքով պայմանավորված՝ ատենախոսության մեջ փորձ է արվել նաև
գործնական քաղաքական խնդիրներն ուսումնասիրել գիտական-ակադե-
միական տեսանկյունից՝ էմպիրիկ առումով անհրաժեշտ կապ ստեղծելով ա-
տենախոսության տեսական նյութի և գործնական քաղաքական իրողութ-
յունների միջև:

Գործնական գործոններն են՝ 2015 թվականի դեկտեմբերի 6-ին հան-

րաքվեի միջոցով ՀՀ Սահմանադրության փոփոխությունների արդյունքում խորհրդարանական կառավարման ձևի սահմանադրաիրավական ամրագրումը և 2018թ. ապրիլի-մայիս ամիսներին տեղի ունեցած քաղաքական փոփոխությունները, որոնց սոցիալ-իրավական հետևանքներն ընկած են ընթացիկ սահմանադրական և քաղաքական գործընթացների հիմքում:

Նշյալ հարցադրումների կապակցությամբ կատարված և սույն ատենախոսական աշխատանքում արտացոլված գիտական հետազոտությունը նպատակ ունի հայեցակարգային հիմքեր ստեղծել հասարակության իրավագիտակցության բարձրացման և առկա ու հետագա սոցիալ-իրավական և քաղաքական զարգացումներն ավելի կանխատեսելի դարձնելու, պետական կառավարման համակարգի արդյունավետ գործառնմանը նպաստող հնարավոր սահմանադրական և օրենսդրական փոփոխությունների հայեցակարգային հիմքերը հայտնաբերելու համար, ինչպես նաև կարող է որոշակի նպաստ բերել խորհրդարանական կառավարման ձևի իմացությանը, քաղաքական գործընթացների վրա ազդող խորքային-կառուցակարգային գործոնների ընկալմանն ու պետական ապարատի գործնական աշխատանքի կազմակերպմանը և իրականացմանը:

Գտնում ենք, որ, մեծ հաշվով, վերոշարադրյալով է պայմանավորված ատենախոսական աշխատանքի թեմայի ընտրությունը և հետազոտության արդիականությունը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Սույն ատենախոսական աշխատանքի հիմնական նպատակն է պետական կառավարման ձևի սահմանադրաիրավական և իրավահամեմատական վերլուծության միջոցով ներկայացնել Հայաստանի Երրորդ Հանրապետության պետական կառավարման ձևի էվոլյուցիան՝ նպատակ ունենալով այդ համատեքստում բացահայտել պետական կառավարման համակարգի (ձևի) զարգացման փուլերի տրամաբանական և կառուցակարգային կապը, դրանցով պայմանավորված՝ զարգացման հնարավոր միտումները և այս լույսի ներքո հիմնավորելով մեզանում կառավարման նոր՝ խորհրդարանական ձևի սահմանադրաիրավական ամրագրման օրինաչափությունը և ներկայացնելով խորհրդարանական կառավարման համակարգի արդյունավետ գործառնմանը խոչընդոտելու ունակ ունեցող գործոնները:

Հետազոտության խնդիրներն են՝

- բացահայտել և համակարգված ներկայացնել Հայաստանի անկախության սկզբնական փուլում պետաիշխանական համակարգի ձևավորման կառուցակարգային առանձնահատկությունները և կառավարման ձևի տեսակային ընտրության վրա ազդող իրավաքաղաքական և կառուցակարգա-

յին պայմանները.

- գիտագործնական չափանիշներով ուրվագծել Հայաստանի Երրորդ Հանրապետության պետական կառավարման համակարգի մոդելների հաջորդայնության իրավաքաղաքական օրինաչափությունները.

- Հայաստանում կիսանախագահականից խորհրդարանական համակարգի անցման համատեքստում վեր հանել կիսանախագահական կառավարման ձևի գործնական և կառուցակարգային թերությունները, կանխատեսել դրանց հնարավոր հետևանքները.

- պետական կառավարման ձևի սահմանադրաիրավական ամրագրման փորձի համակողմանի վերլուծության արդյունքներով ներկայացնել խորհրդարանական կառավարման համակարգի ներդրման անհրաժեշտությունը հիմնավորող նոր ասպեկտներ.

- վերլուծել 2018թ. քաղաքական փոփոխությունների հետևանքով առաջացած սահմանադրաիրավական նոր իրավիճակը՝ խորհրդարանական կառավարման համակարգի կառուցակարգային առանձնահատկությունների, դրանց կատարելագործման և զարգացման տեսանկյունից:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության ուսումնասիրության օբյեկտը հայրենական կառավարման համակարգն է, իսկ հետազոտության առարկան՝ կառավարման խորհրդարանական համակարգի առանձնահատկություններն ու իրացման ուղիները:

Հետազոտության թեմայի մշակվածության վիճակը և տեսական հիմքերը: Ազգային սահմանադրական իրավունքի գիտությունը որոշակիորեն անդրադարձել է պետական կառավարման ձևի ուսումնասիրությանը: Այս խնդրի գիտական մշակվածության գործում մեծ ներդրում ունեն Գ. Հարությունյանը, Գ. Դանիելյանը, Ա. Վաղարշյանը, Վ. Ստեփանյանը, Հ. Ստեփանյանը, Հ. Թովմասյանը, Գ. Սաֆարյանը, Ա. Մանասյանը, Վ. Պողոսյանը, Ն. Այվազյանը, Վ. Այվազյանը, Հ. Խաչատրյանը, Ա. Հարությունյանը, Վ. Նազարյանը, և այլք:

Քննարկվող հիմնախնդիրը համակողմանիորեն ուսումնասիրվել է նաև արևմտյան սահմանադրական և քաղաքական մտքի ականավոր ներկայացուցիչների՝ Մ. Դյուվերտիի, Զ. Սարտորիի, Զ. Կերիի, Մ. Շուգարտի, Ֆ. Ֆուկույամայի, Տ. Աճեմօղլուի, Մաքս Վեբերի և այլոց, ինչպես նաև հետխորհրդային ռուսական սահմանադրական իրավունքի գիտության ճանաչված ներկայացուցիչների՝ Մ.Բագլայի, Վ.Զիրկինի, Ս. Ավագյանի և այլ իրավագետների կողմից:

Հավուր պատշաճի արժևորելով ազգային և արտասահմանյան գիտնականների ներդրումը հետազոտվող թեմայի ուսումնասիրման գործում՝

գտնում ենք, որ սույն ատենախոսական աշխատանքը վերոնշյալներից որոշակիորեն առանձնանում է ինչպես հետազոտության մեթոդաբանությամբ, այնպես էլ ընտրված ասպեկտներով, որոնք հանգամանորեն արտացոլված են ատենախոսությունում:

Հետազոտության իրավական և փորձառական հիմքերը:

Հետազոտության նորմատիվ հիմքն են կազմել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը՝ երեք խմբագրությամբ, Հայաստանի անկախության հռչակագիրը, «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքը, «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքն ու թեմային վերաբերելի նորմատիվ իրավական այլ ակտերը, Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ընդունված՝ դատական և իրավական բարեփոխումների 2022-2026թթ. ռազմավարությունը, նախքան Սահմանադրության ընդունումը պետական իշխանության բարձրագույն մարմինների կազմավորման և գործունեության կարգն ու լիազորությունները սահմանող օրենքները, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Իտալիայի, Հունաստանի, Լատվիայի, Չեխիայի և այլ երկրների սահմանադրությունները և թեմային վերաբերելի ընթացիկ օրենքները, Եվրոպայի խորհրդի Իրավունքի միջոցով ժողովրդավարության եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) և միջազգային այլ կառույցների խորհրդատվական փաստաթղթերը:

Հետազոտության ընդհանուր մեթոդաբանությունը: Սույն ատենախոսական աշխատանքի հետազոտության հիմքում դրված են ինչպես ընդհանուր գիտական մեթոդները՝ դիալեկտիկայի օրենքները, ինդուկցիան, դեդուկցիան, սինթեզը, անալիզը, համակարգա-կառուցվածքային մեթոդը, այնպես էլ մասնավոր գիտական մեթոդները՝ իրավահամեմատական, ձևական-իրավաբանական, իրավական մոդելավորման մեթոդները և այլ մեթոդներ:

Հետազոտության գիտական նորույթը: Սույն ատենախոսության գիտական նորույթը կայանում է սահմանադրական ուսմունքների և սահմանադրականության արդի ժամանակաշրջանի զարգացումների հիման վրա Հայաստանի Երրորդ Հանրապետության կառավարման ձևի էվոլյուցիան, դրանով թելադրված միտումները նոր ասպեկտներով ներկայացնելը, որն ուղեկցվել է հանրային իշխանության համակարգի զարգացման պատմաիրավական փուլերի միջև փոխադարձ կապի և զարգացման միտումների, ինչպես նաև պետական կառավարման ձևի զարգացման առավել նախընտրելի ուղղությունների բացահայտմամբ: Ի մասնավորի, հետազոտության առանցքային խնդիրներից է համարվել կառավարման ձևի

ընտրության վրա այս կամ այն չափով ազդեցություն ունեցող իրավական, քաղաքական, տնտեսական և այլ հանգամանքների վերհանումը՝ հստակեցնելով դրանցից յուրաքանչյուրի ազդեցության սահմաններն ու հնարավոր հետևանքները:

Սույնի համատեքստում պաշտպանության են ներկայացվել հետևյալ դրույթները.

1. Կատարված վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ վարչապետի թեկնածուին առաջադրվող պահանջները բավարար չեն խորհրդարանի, վարչապետի և ամբողջ կառավարության հանրային հաշվետվողականության, պետական կառավարման հարցում սուբյեկտիվիզմի ու ստվերային կառավարման երևույթների կանխարգելման ինստիտուցիոնալ նախադրյալներ ձևավորելու համար: Մասնավորապես, գործող իրավակարգավորումներով Ազգային ժողովի, իսկ փաստացի՝ խորհրդարանական մեծամասնության կողմից վարչապետ կարող է ընտրվել տարիքի, քաղաքացիության և նստակեցության պահանջները բավարարող ցանկացած անձ՝ անկախ խորհրդարանական մեծամասնության ընտրական ցուցակը գլխավորելու, դրանում ընդգրկված լինելու կամ համապատասխան կուսակցության անդամը լինելու հանգամանքից: Այդ կերպ վարչապետ կարող է ընտրվել հանրությանն անհայտ կամ հանրային բավարար վստահություն չունեցող անձ, ով, իրեն ընտրած քաղաքական ուժի հետ չունենալով ինստիտուցիոնալ և քաղաքական համարժեք փոխառնչություններ, կարող է վարել ոչ կանխատեսելի և պոպուլիստական քաղաքականություն՝ թուլացնելով պետական կառավարման համակարգի հանրային վարկանիշն ու ներքին միասնականությունը, ինչպես նաև ձևախեղելով կուսակցության ինստիտուտը՝ որպես խորհրդարանական կառավարման համակարգում պետական իշխանության ձևավորման քաղաքական «խողովակ»:

Հաշվի առնելով վերը նկարագրված դիսկերը՝ նպատակահարմար կլինի փոփոխություն կատարել «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում և Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող կուսակցությունների ու դաշինքների համար սահմանել պահանջ հրապարակել վարչապետի իրենց թեկնածուին, ով պետք է ներառված լինի իրենց ընտրական ցուցակում կամ սահմանել, որ ընտրական ցուցակի առաջին համարով նշված անձը տվյալ քաղաքական ուժի վարչապետի թեկնածուն է:

Վարչապետի պաշտոնը թափուր մնալու դեպքերի համար «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում կարելի է նախատեսել դրույթ առ այն, որ վարչապետի հրաժարականի պարագայում վարչապետի

թեկնածու կարող է առաջադրվել խորհրդարանում ներկայացված քաղաքական ուժի ընտրական ցուցակում ընդգրկված անձանցից մեկը:

2. Դեռևս սահմանադրական փոփոխությունների նախնական փուլում խոսվում էր խորհրդարանական կառավարման պարագայում երկրի պաշտպանության հնարավոր խոցելիության մասին, քանզի որոշակիորեն սահմանափակվում է կիսապատերազմական վիճակում գտնվող երկրում օպերատիվ որոշումներ ընդունելու հնարավորությունը: Սույն համատեքստում, սակայն, հետագա զարգացումները, թերևս, ընթացան Սահմանադրության ընդհանուր ոգուն հակասող տրամաբանությամբ, և, մասնավորապես, սահմանադրական կարգավիճակ վերապահվեց Անվտանգության խորհրդին, որն արդեն ոչ միայն իրականացնելու է խորհրդատվական գործառույթ, այլև ընդունելու է անմիջապես բանակի կառավարման առնչվող էական որոշումներ՝ ընդ որում, գրեթե գտնվելով խորհրդարանի վերահսկողությունից դուրս: Հետազոտությունում հիմնավորվել է այն եզրահանգումը, որ ռազմական բախումների իրական վտանգ ունեցող երկրներում խորհրդարանական կառավարման ձևի պարագայում խնդրահարույց է ունենալ լիազորություններով միմյանց գրեթե կրկնող, իսկ գործնականում միմյանց խոչընդոտող տարաբնույթ կիսախորհրդատվական մարմիններ: Առավել ևս օրինաչափ չէ ունենալ մի մարմին, որի լիազորությունները պաշտպանության ոլորտում համընկնում են Կառավարության և պաշտպանության նախարարության իրավասության հետ: Ավելի հիմնավորված է դիտարկվում այն մոտեցումը, որ պաշտպանության ոլորտում քաղաքականության մշակման մենաշնորհը պատկանի Կառավարությանը, կոնկրետ կառավարչական որոշումների կայացման լիազորությունը ռազմաքաղաքական մակարդակում վերապահվի պաշտպանության նախարարին, իսկ զինված ուժերի գործառման վերաբերյալ օպերատիվ որոշումների կայացումը՝ Կառավարության վերահսկողության ներքո գտնվող արհեստավարժ և համարժեք լիազորություններով օժտված զինվորականի՝ Չինված ուժերի գլխավոր շտաբի պետին:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության համապատասխան իրավակարգավորումները փաստում են, որ վարչապետը Կառավարության միանձնյա ղեկավարն է և, հաշվի առնելով Կառավարության կազմավորման և հրաժարականի սահմանադրական դրույթները, հենց վարչապետն է առաջնային քաղաքական պատասխանատվության սուբյեկտը Կառավարության գործունեության համար: Ակնհայտ է նաև, որ պաշտպանության քաղաքականությունն ու

զինված ուժերի կառավարումը Կառավարության և, ընդհանրապես, գործադիր իշխանության քաղաքականության հիմնական ուղղություններից մեկն է, որի իրականացման հիմնական պատասխանատուն կրկին վարչապետն է: Սույն համատեքստում զինված ուժերի գերագույն հրամանատարի կարգավիճակը, ըստ էության, պետք է հանդիսանա գործադիր իշխանության ուղղահայացում վարչապետի իրավաքաղաքական կարգավիճակի կառուցկարգային արտացոլումը պաշտպանության ոլորտի կառավարման համակարգում, որի տրամաբանական հետևանքը պետք է լինի վարչապետին զինված ուժերի գերագույն հրամանատարի կարգավիճակի սահմանադրական ամրագրումը՝ թե՛ խաղաղ և թե՛ պատերազմական իրավիճակների համար: Ավելին՝ խորհրդարանական ընտրություններում ընտրողների վստահության քվեն ստացած քաղաքական ուժի վարչապետի թեկնածուն ժողովրդի մանդատն ստանում է պետության ամբողջական կառավարման իրականացումն ապահովելու համար, ինչը հաշվետու կառավարման համար անհրաժեշտ է դարձնում գործադիր իշխանության համակարգի այնպիսի կառուցվածք, որը կարտացոլի վարչապետի՝ որպես գործադիր իշխանության գործունեության առաջնային և ղեկավար քաղաքական պատասխանատուի, իրավավիճակը: Սա ևս օրախնդիր է դարձնում զինված ուժերի ղեկավարման ոլորտում վարչապետի կարգավիճակի հստակեցումը:

Վերոնշյալի հաշվառմամբ, ատենախոսությունում առաջարկվել է փոփոխություն կատարել Սահմանադրությունում և վարչապետին օժտել զինված ուժերի գերագույն հրամանատարի անվերապահ կարգավիճակով:

4. Փոփոխված Սահմանադրությամբ ընդդիմության ինստիտուտին սահմանադրական կարգավիճակ տալն ինքնին ի գորու չէ լիարժեքորեն լուծել պառլամենտարիզմի և դրա շրջանակում ընդդիմության սահմանադրա-իրավական ներուժի լիարժեք իրացման խնդիրները: Մասնավորապես, խորհրդարանական ընդդիմության սահմանադրական ներկայիս լիազորությունները, մեր կարծիքով, բավարար չեն իշխող մեծամասնության գործունեության նկատմամբ արդյունավետ վերահսկողության իրականացման համար: Ավելին՝ անգամ ներկայումս ընդդիմությանը վերապահված լիազորությունների գործնական նշանակությունն ինքնաբավ չէ, այլ կախված է խորհրդարանում ընդդիմության ներկայացվածությունից, և համապատասխան որոշումների կայացման համար անհրաժեշտ ձայների տիրապետող խորհրդարանական մեծամասնությունն այլևս շարժառիթ չի ունենում սահմանադրական մարմինների կազմը ձևավորելիս կամ սահմանադրական օրենքներ ընդունելիս ստանալ ընդդիմության համաձայնությունը:

Հետազոտությունում հիմնավորվել է այն դիրքորոշումը, ըստ որի՝ ընդդիմության գործունեությունը կարող է առավել արդյունավետ լինել, եթե վերջինս երաշխավորված ներկայացվածություն ունենա վերահսկողական գործառույթներով օժտված, ինչպես նաև պետական կառավարման համակարգում չընդգրկված անկախ մարմիններում:

Ընդ որում, նպատակահարմար է ապահովել ընդդիմության թեկնածուի ընտրությունը միայն ընդդիմության քվեարկությամբ: Դա թույլ կտա թեկնածու առաջադրելիս և քվեարկելիս ապահովել ընդդիմության լիարժեք ինքնուրույնությունը և այդպիսով հիմքեր ստեղծել պաշտոնավարման ընթացքում ընդդիմության ներկայացուցիչների անկախության համար:

Ընդսմին, ընդդիմության սահմանադրական կարգավիճակից բխող գործունեության նշյալ երաշխիքների ավելացմամբ չի խաթարվում իշխող ուժի պատասխանատվության սկզբունքը, քանզի այն շարունակում է անարգել մշակել և իրականացնել քաղաքականություն, իսկ ընդդիմության միջոցով ապահովվում է անաչառ ու իրական վերահսկողություն:

5. Հետազոտությունում հիմնավորվել է, որ «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով նախատեսված կայուն խորհրդարանական մեծամասնության ձևավորման կարգն առերևույթ հակասում է Սահմանադրության 2-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժողովրդաիշխանության սկզբունքին և 89-րդ հոդվածի 3-րդ մասին, որոնց համադրված վերլուծությունից բխում է, որ կայուն խորհրդարանական մեծամասնությունը պետք է ձևավորվի ընտրությունների արդյունքում՝ ուղակիորեն կամ ընտրությունների արդյունքներով խորհրդարան անցած քաղաքական ուժերի կոալիցիայի միջոցով՝ հիմք ընդունելով ընտրողների կողմից կուսակցություններին կամ դաշինքներին տրված ձայների բաշխվածությունը: Մինչդեռ, Ընտրական օրենսգրքի կարգավորումներից հետևում է, որ քաղաքական ուժը կամ կոալիցիան կարող է ձեռք բերել կայուն խորհրդարանական մեծամասնություն բոնուսային համակարգի կիրառմամբ՝ փաստացի ի հեճուկս ընտրողների կամքի: Նման իրավիճակը հանգեցնում է ընտրողների ձայների ոչ համամասնական բաշխմանը և կայուն մեծամասնություն ստացած քաղաքական ուժի համեմատությամբ մյուս ուժերին տրված ձայների նկատմամբ անհավասար վերաբերմունքի:

Առկա իրավակարգավորման ռիսկերի չեզոքացման համար առավել նպատակահարմար է վերացնել խորհրդարանական մեծամասնության ձևավորման բոնուսային տարբերակը: Այդ դեպքում կայուն խորհրդարանական մեծամասնությունը կձևավորվի ժողովրդի կամքին համապատասխան: Հետևաբար, Ընտրական օրենսգրքով նախատեսված կոալիցիոն բանակցություններ կամ երկրորդ փուլ տեղի կունենա, եթե քաղաքական ուժերից և

ոչ մեկը չի ստացել մանդատների առնվազն 52 տոկոսը, կամ չի ձևավորվել այնպիսի կոալիցիա, որը կտիրապետի նշված տոկոսային հարաբերությամբ պատգամավորական մանդատների:

Հետազոտությունում հիմնավորվել է այն տեսակետը, ըստ որի՝ կայուն մեծամասնությունն առավել հուսալի է ոչ թե սոսկ թվաքանակ ապահովելու, այլ բովանդակային կտրվածքով:

6. Հետազոտությունում հիմնավորվել է, որ փոփոխված Սահմանադրությամբ ամրագրված Նախագահի խիստ սահմանափակ դերը պետական իշխանության սահմանադրական համակարգի ձևավորման գործընթացում բավարար երաշխիքներ չի ստեղծում սույն հարցում Ազգային ժողովի և, մասնավորապես, խորհրդարանական մեծամասնության քաղաքական կամքը հակակշռելու և որպես սահմանադրակարգի պաշտպան և «արբիտր»՝ պետական իշխանության մարմինների համակարգի սահմանադրական վարքագծին նպաստելու համար: Մասնավորապես, Նախագահը գրեթե չունի այսպես կոչված սեփական լիազորություններ, որոնց իրացումը կախված չլինի պետական այլ ինստիտուտներից, և որոնք, լինելով Նախագահի ինքնավար կամքի իրացման արդյունք, ունենան ինքնուրույն իրավական հետևանքներ: Նման լիազորությունների բացակայությունը հատկապես զգացնել է տալիս սահմանադրական-քաղաքական ճգնաժամերի դեպքերում, երբ Նախագահն ունի իր սահմանադրական կարգավիճակից բխող ներուժ ճգնաժամի հանգուցալուծմանը նպաստելու համար, սակայն բացակայում են կոնկրետ լիազորությունները, որոնք Նախագահին հնարավորություն կտային իրացնել այդ ներուժը:

Հիշյալ խնդիրն էլ ավելի բարդացավ, երբ Նախագահի առանց այդ էլ սահմանափակ մի քանի լիազորության իրացումը հիմնականում փոխկապակցվեց Կառավարության կամ վարչապետի դիրքորոշմանը:

Վերոնշյալի հաշվառմամբ, հետազոտությունում հիմնավորվել է պետաիշխանական համակարգում Նախագահի գործուն դերակատարման ուժեղացման անհրաժեշտությունը, առաջադրվել են ներկա զարգացումներին համահունչ լուծումներ: Մասնավորապես, խոսքը վերաբերում է Նախագահին որոշակի դեպքերում խորհրդարանն արձակելու, փոխվարչապետերին, նախարարներին նշանակելու և պետաիշխանական համակարգի ձևավորման այլ հարցերում առավել ընդարձակ լիազորություններ տրամադրելու, Նախագահին սահմանափակ հարցերի վերաբերյալ օրենսդրական նախաձեռնության լիազորության վերապահման, քաղաքացիության և ներում շնորհելու լիազորությունների իրացման հարցերում Նախագահի լիարժեք ինքնուրույնության տրամադրման անհրաժեշտությանը:

7. 2018թ. քաղաքական փոփոխությունների արդյունքում տեղի ունեցած գործընթացները բացահայտեցին Հայաստանում քաղաքական ճգնաժամերի հանգուցալուծման սահմանադրական-իրավական կառուցակարգերի սղությունը: Ըստ այդմ, հետազոտությունում ներկայացվել են քաղաքական ճգնաժամերի կառավարման և հանգուցալուծման սահմանադրական նոր կառուցակարգերի տարբերակները՝ Նախագահին խորհրդարանն արձակելու լիազորությամբ օժտելը՝ խորհրդարանի անգործունակության որոշակի դեպքերում կամ խորհրդարանի ինքնարձակում այն դեպքերում, երբ առկա չէ կայուն խորհրդարանական մեծամասնություն, ինչպես նաև խմբակցություններից պատգամավորների դուրս գալու խնդրի իրավական կանոնակարգման վերանայման անհրաժեշտությունը:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը:

Հետազոտության տեսական նշանակությունը կայանում է նրանում, որ հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել ուսումնառության նպատակներով, օրինակ՝ «Հայաստանի Հանրապետության պետության և իրավունքի պատմություն», «Սահմանադրական իրավունք», «Արտասահմանյան երկրների սահմանադրական իրավունք» դասընթացների, ինչպես նաև քննարկվող հիմնախնդրի հետազոտումնասիրությունների համար:

Գործնական նշանակության առումով՝ հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել իրավաստեղծ և իրավակիրառ ոլորտներում: Մասնավորապես, սույն գիտական աշխատանքում տեղ գտած առաջարկները և պաշտպանության ենթակա թեզերը կարող են կիրառվել «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի և «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի բարեփոխման շրջանակում, սահմանադրական և ընթացիկ օրենսդրության սահմանադրականացման գործընթացում:

Աշխատանքի կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, դրանցում ամփոփված հինգ ենթագլխից, եզրակացությունից և օգտագործված իրավական ակտերի ու գրականության նյութերի ցանկից:

Հետազոտության արդյունքների փորձարկումը: Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի տասնմեկ հոդվածում և քննարկվել են ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածություն: Ներածության մեջ հիմնավորվում է ատենախոսության

թեմայի արդիականությունը, ներկայացվում են գիտական մշակվածության աստիճանը, հետազոտության օբյեկտն ու առարկան, նպատակը և խնդիրները, ատենախոսական աշխատանքի մեթոդաբանական հիմքերը և գիտական նորույթը, ձևակերպված են պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, հիմնավորվում է հետազոտության արդյունքների տեսական և գործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին գլուխը կրում է «Հայաստանի Հանրապետության կառավարման ձևի էվոլյուցիան և ձևավորման օրինաչափությունները նախքան 2015թ. սահմանադրական բարեփոխումները» վերտառությունը և բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլուխը կոչվում է «Հայաստանի Հանրապետության կառավարման ձևը և դրա իրավական ու կառուցակարգային բաղադրիչները նախասահմանադրական շրջանում» և նվիրված է նախքան Սահմանադրության ընդունումն ընկած ժամանակաշրջանում Հայաստանի պետաիշխանական մոդելների ուսումնասիրությանն ու վերլուծությանը, դրանց ձևավորման վրա ազդող այլապլ գործոններին:

Մասնավորապես, հիմնավորվում է, որ Հայաստանի Հանրապետությունը 1990թ. օգոստոսի 23-ին Անկախության հռչակագրի ընդունումից հետո ունեցել է խորհրդարանական կառավարման համակարգ, որը գործել է մինչև 1991թ. հոկտեմբեր ամիսը, երբ Հայաստանում տեղի ունեցավ Նախագահի առաջին ընտրությունը: Խորհրդարանական կառավարման ձևի իրավահայեցակարգային հիմքը կազմել է Անկախության հռչակագիրը, որը ժողովրդավարական լեգիտիմացիայի առաջնային մանդատը վերապահում էր միայն Գերագույն խորհրդին և սահմանում էր նրա համակարգաստեղծ կարգավիճակի հիմնադրույթները: Քննարկվող շրջափուլում ամբողջ օրենսդրությունը ձևավորվում էր Անկախության հռչակագրի նորմատիվ և գաղափարական հենքի վրա: Ըստ այդմ, 1990-1991թթ. Գերագույն խորհուրդը Հայաստանի Հանրապետության բարձրագույն ներկայացուցչական և օրենսդիր մարմինն էր, որին ենթարկվում և որին հաշվետու էին պետական իշխանության մյուս մարմինները:

Այնուհետև անցում է կատարվում 1991-1995թթ. Հայաստանի Հանրապետությունում գործած կառավարման ձևի ուսումնասիրությանը, որը նախագահական էր: Այն հիմնված էր գլխավորապես երկու՝ 1991թ. օգոստոսի 1-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության Նախագահի մասին» և 1991թ. նոյեմբերի 11-ին ընդունված «Գերագույն խորհրդի մասին» սահմանադրական օրենքների վրա:

Հեղինակի կողմից ուսումնասիրվում և վերլուծվում են Հայաստանի Հանրապետության պետական կառավարման նախագահական համակար-

գի բնորոշ գծերն ու առանձնահատկությունները՝ դրանք համեմատելով նախագահական համակարգ ունեցող այլ պետությունների և, մասնավորապես, ԱՄՆ-ի պետաիշխանական կառուցակարգերի հետ:

Ենթագլուխն ավարտվում է այն եզրահանգմամբ, որ 1991-1995թթ. նախագահական համակարգը կարելի է համարել նահանջ Անկախության հռչակագրով սահմանված պառլամենտարիզմի և խորհրդարանի «գերակայության» հիմնադրույթներից: Միևնույն ժամանակ, նշյալ ժամանակահատվածում Հայաստանում գործած նախագահական կառավարման ձևն առավել հավասարակշռված էր և համապատասխանում էր իշխանությունների տարանջատման սահմանադրական սկզբունքին՝ ի տարբերություն 1995թ. Սահմանադրությամբ նախատեսված անվանապես կիսանախագահական, իսկ իրականում գերնախագահական համակարգի:

Երկրորդ ենթագլուխը կոչվում է «Գերնախագահական կառավարման համակարգի հիմքերը՝ Հայաստանի Հանրապետության 1995թ. Սահմանադրությամբ»: Սույն ենթագլխում խոսք է գնում կառավարման ձևի ընտրության և սահմանման չափանիշների մասին: Մասնավորապես, նշվում է, որ կառավարման ձևի ընտրության, պետաիշխանական բարձրագույն մարմինների փոխահարաբերությունների գնահատման, պետական ինստիտուտների լիազորությունների իրացման և պետական կառավարման ձևի դասակարգման վրա մեծ ազդեցություն ունեն ոչ միայն Սահմանադրությամբ ամրագրված կառուցակարգերը, երաշխիքները, այլև սոցիալ-իրավական, քաղաքական և նույնիսկ տնտեսական տարաբնույթ գործոններ, որոնք թվարկված են ատենախոսությունում: Լայն իմաստով, կառավարման ձևի ընտրությունը և փաստացի բովանդակությունը պայմանավորված են հասարակության և պետության սահմանադրական արժեքանության մակարդակով և առանձնահատկություններով, որոնք ընդգրկում են նաև վերը թվարկված հանգամանքները:

Հեղինակն առաջարկում է տարբերակել սահմանադրականության արդի հայեցակարգը, որն ստացել է միջազգային ճանաչում և ամրագրված է հիմնարար միջազգային իրավական ակտերում և սահմանադրական արժեքանության ներպետական համակարգը, որը կարող է տարբերվել կատարյալ պոստուլատներից, որոնք տեղ են գտել միջազգային հանրաճանաչ փաստաթղթերում և հաճախ համարժեք արտացոլված են պետությունների սահմանադրություններում՝ կրելով տվյալ հանրույթի աշխարհընկալման և իրավագիտակցության առանձնահատկությունների կնիքը:

Հաշվի առնելով այս ամենը՝ սահմանադրությունները կարող են նորմատիվ ամրագրում տալ հասարակության ներսում առկա status-quo-ին, այդ թվում պետական կառավարման ձևի էության մասով, կամ այսպես կոչված

փաստացի սահմանադրությունը կարող է տարբերվել ձևական փաստաթղթում տեղ գտած իրավադրույթներից և կառուցակարգերից: Վերջին դեպքում խոսք է գնում «ֆասադային» ժողովրդավարությունների մասին:

Ենթազխում քննարկվում են նաև պետական կառավարման համակարգի ժողովրդավարականության չափանիշները: Ըստ այդմ, եզրահանգվում է, որ կառավարման ձևերի ժողովրդավարական լինելու առանցքային ձևական չափանիշը դրա համապատասխանությունն է իշխանությունների տարանջատման սկզբունքին, իսկ բովանդակային-նյութական չափանիշը՝ սահմանադրական մշակույթի և հասարակական հարաբերությունների սահմանադրականացման մակարդակը: Դրանց խախտումն անխուսափելիորեն հանգեցնում է պետական համակարգի կառուցակարգային ձևախեղման՝ առանախոսությունում քննարկված այլ գործոնների հետ մեկտեղ հիմքեր ստեղծելով պետության բնութագրի փոփոխման համար՝ ժողովրդավարականից դեպի բռնապետական (ավտորիտար) և (կամ) ամբողջատիրական (տոտալիտար) կամ «ֆասադային» ժողովրդավարությունների (հիբրիդային քաղաքական ռեժիմների) ձևավորման համար և հակառակը:

Քննարկելով 1995թ. խմբագրությամբ Սահմանադրությամբ ամրագրված պաշտոնապես կիսանախագահական կառավարման ձևը՝ հեղինակը եկել է այն եզրահանգման, որ այն չի համապատասխանում պետական կառավարման ձևի ժողովրդավարականության չափանիշներին, ինչպես նաև կիսանախագահական կառավարման համակարգի ակադեմիական չափորոշիչներին և միջազգային լավագույն փորձին: Սույն համատեքստում նշյալ ժամանակաշրջանում Հայաստանի Հանրապետության պետաիշխանական մոդելը հեղինակի կողմից համեմատության մեջ է դրվել կիսանախագահական հանրապետություններ Ֆրանսիայում և Պորտուգալիայում գործող պետա-իշխանական կառուցակարգերի հետ:

Նշյալի լույսի ներքո հեղինակի կողմից առաջարկվել է Հայաստանի 1995թ. խմբագրությամբ Սահմանադրությամբ ամրագրված կառավարման համակարգը քնորոշել որպես գերնախագահական՝ հաշվի առնելով նաև այդպիսի համակարգերի վերաբերյալ ակադեմիական մոտեցումներն ու միջազգային պրակտիկան: Ենթազխում անդրադարձ է կատարվել նաև Հայաստանում գերնախագահական կառավարման համակարգի սոցիալ-իրավական և քաղաքական նախադրյալներին:

«Կիսանախագահական կառավարման ձևն ու դրա կառուցակարգային տարրերը՝ ըստ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2005թ. փոփոխությունների» վերտառությամբ երրորդ ենթազխում անդրադարձ է կատարվում 2005թ. սահմանադրական փոփոխությունների սոցիալ-իրավական նախադրյալներին:

Ենթագլխում քննարկվում են 2005թ. փոփոխված Սահմանադրության այն հիմնական կառուցակարգերը, որոնք վերաբերում են կառավարման համակարգի փոփոխությանը և նպատակաուղղված էին սահմանափակել Նախագահի անձնական իշխանության ձևական կառուցակարգերը և որոշումների կայացման գործընթացն առավել ապակենտրոնացնել՝ դրանում մեծացնելով Ազգային ժողովի, վարչապետի և Կառավարության դերը:

Սույն համատեքստում կատարվել է այն եզրահանգումը, որ 2005թ. սահմանադրական փոփոխությունները, թեև որոշակիորեն բարելավեցին մինչ այդ գործող գերնախագահական համակարգը և սահմանափակեցին Նախագահի լիազորությունները, այդուհանդերձ, Նախագահի ինստիտուտը, հաշվի առնելով նաև նրան սատարող քաղաքական մեծամասնությունը խորհրդարանում, շարունակել էր գերակա դիրք զբաղեցնել պետական իշխանության համակարգում և էական ներազդեցություն ունենալ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների վրա:

Բացի այդ, Հայաստանում կիսանախագահական կառավարման ձևի գործառնական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առկա են սահմանադրական կարգավորումներից տարաբնույթ շեղումներ, որոնք կարող են հակոտնյա լինել կիսանախագահական կառավարման ձևի փիլիսոփայությանն ու տրամաբանությանը: Որպես այդպիսին հեղինակի կողմից մատնանշվում են օրակարգային բոլոր հարցերով Նախագահի կողմից կառավարության նիստերը հրավիրելու և վարելու և ուղղակիորեն իր իրավասությանը չվերաբերող հարցերով վարչապետին և նախարարներին ցուցումներ և հանձնարարականներ տալու հանգամանքը, հրապարակավ Ազգային ժողովի կողմից քննարկվող օրինագծի ընդունման վերաբերյալ խորհրդարանին ուղղորդող հայտարարություններ անելը, վարչապետի և նախարարների թեկնածություններն իշխող կուսակցությունում առաջադրելը: Ավելին՝ թեև 2005թ. խմբագրությամբ Սահմանադրությունը Նախագահին պարտավորեցնում է վարչապետ նշանակել Ազգային ժողովում ներկայացված քաղաքական ուժերի հետ խորհրդակցության հիման վրա՝ նշանակելով խորհրդարանի մեծամասնության վստահությունը վայելող անձին, պրակտիկայում Նախագահն առավելապես տեղեկացրել է պատգամավորներին վարչապետի իր նախընտրած թեկնածուի վերաբերյալ և իր դիրքորոշումը չի պայմանավորել Ազգային ժողովի քաղաքական մեծամասնության մոտեցումներով:

Սույն ենթագլխում արվել է այն եզրահանգումը՝ ըստ որի՝ կիսանախագահական կառավարման ձևի իրացման կառուցակարգային շեղումները պայմանավորված են ժողովրդավարական կոնսոլիդացման ոչ բավարար մակարդակով, այդ թվում անձնիշխանության ձևավորված ավանդույթով:

Երբ նման իրողությունները զուգորդվում են նաև օբյեկտիվորեն կիսանախագահական կառավարման ձևի դիսկաստեղծ գործոնների հետ, առաջանում են իշխանավարման տվյալ համակարգի բովանդակային խեղման լուրջ նախադրյալներ, ինչի արդյունքում պետական իշխանության իրականացումը կարող է դուրս գալ Սահմանադրությամբ նախատեսված շրջանակներից և իրականացվել ոչ ֆորմալ կառուցակարգերի և ընթացակարգերի միջոցով:

Ատենախոսության երկրորդ գլուխը կազմված է երկու ենթագլխից և կոչվում է «Խորհրդարանական կառավարման ձևը Հայաստանի Հանրապետությունում և դրա հիմնախնդիրները 2015թ. սահմանադրական փոփոխությունների համատեքստում»:

Առաջին ենթագլուխը կրում է «2015թ. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների արդյունքում սահմանված կառավարման խորհրդարանական ձևի առանձնահատկությունները» վերտառությունը: Այստեղ վերլուծվում են Հայաստանի Հանրապետությունում խորհրդարանական կառավարման ձևի ներդրման սոցիալ-քաղաքական, իրավական և պատմական նախադրյալները, ներկայացվում են Հայաստանում խորհրդարանական կառավարման համակարգի սահմանադրաիրավական ամրագրման կառուցակարգային հատկանիշներն ու առանձնահատկությունները:

Մասնավորապես, որպես Հայաստանում խորհրդարանական կառավարման համակարգի սահմանադրաիրավական ամրագրման սոցիալ-քաղաքական նախադրյալ նշվում է ընդարձակ ձևական և փաստացի լիազորություններ ունեցող Նախագահի ինստիտուտի պայմաններում պետաիշխանական համակարգի հետագա ապակենտրոնացման, կուսակցությունների ինստիտուցիոնալ կայացման խոչընդոտները, քաղաքական էլիտայի շրջանում նոր համակարգային կոնսենսուսի ձևավորման և այդպիսով իշխանության համար մրցակցության փոխադարձաբար ընդունելի կանոնների սահմանման անհրաժեշտությունը, քաղաքական համակարգի բևեռացման հաղթահարումը: Որպես նշյալ գործոնների դիտարկման հայեցակարգային հիմք առաջարկվում է էլիտաների տեսությունը:

Որպես իրավական նախադրյալ առանձնացվում է Հայաստանի անկախության հռչակագիրը, որը նորմատիվ հիմքեր էր ստեղծում Հայաստանում խորհրդարանական կառավարման համակարգի ձևավորման համար: Սույն համատեքստում հեղինակի կողմից քննարկվում է Անկախության հռչակագրին հաջորդած ժամանակաշրջանում Հայաստանում սահմանադրական ամրագրում ստացած կառավարման համակարգերի լիգիտիմության հարցը՝ ելնելով Անկախության հռչակագրին դրանց առերևույթ հակասությունից:

Պատմաքաղաքական նախադրյալների թվին են դասվում Հայաստանի միապետական և եկեղացապետականության ժամանակաշրջանից Հայաս-

տանում գործած խորհրդակցական կառավարման և տարածքային ինքնակառավարման տարրերը, այդ թվում ազգային – եկեղեցական ժողովները, ինչպես նաև հայ իրավական մտքի կողմից ձևակերպված խորհրդարանական կառավարման համակարգի տեսական հայեցակարգերը, հայ ավանդական կուսակցությունների ծրագրային հիմնադրույթները, Հայաստանի Առաջին և Երկրորդ Հանրապետությունների կառավարման սահմանադրական համակարգերը:

Ենթազվառում համակողմանիորեն քննության է առնվում 2015թ. սահմանադրական փոփոխությունների արդյունքում ձևավորվող խորհրդարանական կառավարման ձևի սահմանադրական հիմունքները՝ դրանք դիտարկելով՝ ըստ կառավարման համակարգի իշխանական սուբյեկտների՝ Նախագահի, Ազգային ժողովի և Կառավարության:

Երկրորդ ենթազվառում, որը կոչվում է «Հայաստանի Հանրապետության խորհրդարանական կառավարման ձևի սահմանադրաիրավական կառուցակարգերի ոլորտները և դրանց հաղթահարման ուղիները», վերլուծության են ենթարկվել Հայաստանի Հանրապետության նոր՝ խորհրդարանական կառավարման համակարգի կառուցակարգային ոլորտները, գերազանցապես ներկայացված են որպես պաշտպանության ներկայացվող դրույթներ: Ենթազվառում փորձ է արվել գիտական վերլուծության ենթարկել տեղի ունեցած և ներկայիս իրավաքաղաքական իրադարձությունները՝ պառլամենտարիզմի զարգացման, քաղաքական ճգնաժամերի ժամանակ խորհրդարանական կառավարման ձևի հայաստանյան մոդելի դիմադրունակության և գործող Սահմանադրության՝ որպես հասարակական-քաղաքական համերաշխության կառուցակարգային երաշխիքի, ինքնաբավության խնդիրների համատեքստում:

Ենթազգույսն ամփոփվում է այն դիտարկմամբ, որ Հայաստանում կառուցակարգային առումով հավասարակշռված և երկրի պատմաիրավական փորձն արժևորող Սահմանադրությամբ պետական կառավարման խորհրդարանական մոդելի ներդնումը կարող է արդարացված համարվել, սակայն դրա լիարժեք ինքնաիրացումն ու Հայաստանի քաղաքական պրակտիկայի համարժեք վերափոխումը համեմատաբար երկարաժամկետ խնդիր է: Ըստ այդմ, ներկայացված ոլորտային գործոնների հաղթահարումը կնպաստի խորհրդարանական կառավարման համակարգի առավել լիարժեք և ժողովրդավարական գործառնմանը:

Եզրակացության մեջ հեղինակն ընդհանրացված ներկայացրել է հետազոտության կարևոր հետևությունները:

1. Պետության կառավարման ձևի ընտրությունը, դրա բովանդակությունը և գործնական իրացման մակարդակը պայմանավորված են միմ-

յանց փոխյրացնող բազմաթիվ գործոններով՝ պատմական, քաղաքական, իրավական, սոցիալ-մշակութային: Պետական կառավարման ձևի արդյունավետ գործառնումը մեծապես պայմանավորված է այդ գործոնների բարեհաջող հարմարվելու և ազգային յուրահատկությունների հաշվառմամբ, պետական կառավարման կառուցակարգային համարժեք լուծումներ առաջադրելու կարողությամբ:

2. Կառավարման ձևերի ժողովրդավարական լինելու առանցքային ձևական չափանիշը դրա համապատասխանությունն է իշխանությունների տարանջատման սկզբունքին, իսկ բովանդակային-փաստացի չափանիշը՝ սահմանադրական մշակույթի և հասարակական հարաբերությունների սահմանադրականացման մակարդակը, որոնց գործնական տարբեր դրսևորումները պայմանավորում են տարբեր երկրներում տարբեր քաղաքական ռեժիմների առաջացումը:

3.1990թ. օգոստոսի 23-ին Գերագույն խորհրդի կողմից ընդունված Անկախության հռչակարգով Հայաստանում, ըստ էության, սահմանվել է խորհրդարանական կառավարման ձև՝ ապագայում ընդունվելիք Սահմանադրությունում և համապատասխան օրենսդրությունում դրա կիրարկման պահանջով: Հետևաբար, 1995թ. Սահմանադրությամբ և դրա 2005թ. փոփոխություններով նախագահակենտրոն կառավարման համակարգերի նախատեսումը խախտում է Հայաստանի անկախության հռչակագիրը:

4.Մեզանում իրականացված սահմանադրական փոփոխությունների անհրաժեշտությունն ամենից առաջ պայմանավորված էր քաղաքական ընտրանու տարբեր խմբերի միջև պետական իշխանության ձևավորման նոր կառուցակարգերի շուրջ համաձայնության կայացմամբ և առավել ներառական համակարգի ստեղծման հանրային- քաղաքական պահանջարկով, որի արդյունքում նորմատիվ- կառուցակարգային հիմքեր են ստեղծվում գործող բևեռացված քաղաքական համակարգը վերափոխելու համար:

5.Հայաստանի Երրորդ Հանրապետության ավելի քան 25-ամյա սահմանադրական զարգացման փորձը հուշում է, որ պետական կառավարման ֆորմալ-սահմանադրական համակարգերի և հասարական իրականության փոխազդեցության բարելավման շրջանակում մեզանում ավելի մեծ կարևորություն է տրվել սահմանադրական ձևական լուծումների կատարելագործմանը, մինչդեռ, հասարական հարաբերությունների սահմանադրականացման հարցը բավարար ուշադրության չի արժանացել: Այնինչ, Սահմանադրությամբ նախատեսված՝ իշխանավարման կառուցակարգերի բարելավմանը զուգահեռ՝ խիստ կարևոր է Հայաստանի քաղաքական ընտրանու և ամբողջ հասարակության իրավագիտակցության և երկրի սահմանադրական մշակույթի ընդհանուր մակարդակի բարձրացումը, հասարակական հարա-

բերությունների սահմանադրական արժեքման և սահմանադրականացման գործընթացը:

6. Նոր խմբագրությամբ Սահմանադրությունում առաջարկվող խորհրդարանական համակարգում իշխանության գերանձնավորումը խիստ կնվազի: Կայուն խորհրդարանական մեծամասնության սկզբունքի ներդրմամբ ժողովուրդը մասնակցելու է ոչ միայն օրենսդիր, այլև անուղղակիորեն նաև գործադիր իշխանության ձևավորմանը: Փոփոխված Սահմանադրությամբ Կառավարության քաղաքական պատասխանատվությունը միայն խորհրդարանի առջև, ինչպես նաև ընդդիմության նորացված դերակատարումը կնպաստեն կոլեգիալ կառավարմանը և խորհրդարանի կարգավիճակի ամրապնդմանը:

7. Չնայած, ընդհանուր առմամբ, հավասարակշռված սահմանադրաիրավական լուծումներին՝ Հայաստանի Հանրապետության խորհրդարանական կառավարման ձևն ունի կառուցակարգային խնդիրներ, որոնք սահմանափակում են Սահմանադրության ինքնաբավությունը և կարող են նորմատիվ ու գործնական խոչընդոտներ հարուցել սահմանադրական կայունության համար:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ գիտական հրապարակումներում

1. Հայաստանի կուսակցական համակարգի կայացման հիմնախնդիրը նոր սահմանադրական իրականության պայմաններում, Օրինականություն (<< դատախազության գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես), Եր., N 99, 2017, էջեր 39-46.

2. Հայաստանի Հանրապետության կառավարման համակարգը (ձևը) և դրա կառուցակարգային դրսևորումները նախքան 1995թ. Սահմանադրության ընդունումը, Օրինականություն (<< դատախազության գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես), Եր., N 94, 2016, էջեր 58-63.

3. Ընդդիմության խորհրդարանական կարգավիճակի հիմնախնդիրը սահմանադրական բարեփոխումների համատեքստում, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2016թ. նստաշրջանի նյութերի ժողովածու, ԵՊՀ հրատ., Երևան 2017, էջեր 91-107.

4. << Նախագահը՝ որպես Սահմանադրության երաշխավոր սահմանադրական բարեփոխումների համատեքստում, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2015թ. նստաշրջանի նյութերի ժողովածու, ԵՊՀ հրատ., Երևան 2016, էջեր 115-132.

5. Հայաստանի Հանրապետության խորհրդարանական կառավարման համակարգի կառուցակարգային ռիսկերը և դրանց վերացման ուղիներ:

րը, Դատական իշխանություն (գիտամեթոդական ամսագիր), 10-11/208-209, 2016, հոկտեմբեր-նոյեմբեր, էջեր 18-26.

6. Կառավարման խորհրդարանական ձևի առանձնահատկությունները սահմանադրական բարեփոխումների համատեքստում, Արդարադատություն, «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտ» ՊՈԱԿ, 2016 մարտ 1(32), էջեր 34-38.

7. Պետական իշխանության բարձրագույն մարմինների փոխհարաբերակցությունը և կոնֆլիկտները պետական կառավարման տարբեր ձևերի պայմաններում, Արդարադատություն, «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտ» ՊՈԱԿ, 2015 դեկտեմբեր 4(31), էջեր 21-33,

8. Արցախի Հանրապետության կառավարման նոր ձևի անվտանգային բաղադրիչները. որոշ դիտարկումներ, Մեսրոպ Մաշտոց համալսարանի լրատու, 2018թ., N 1, էջեր 116-126,

9. Հայաստանի թավջա հեղափոխության սահմանադրական-քաղաքական ուրվագիծը, Գիտական Արցախ, 2018թ. դեկտեմբեր N 1, էջեր 126-137,

10. Արցախի Հանրապետության պետականության տարրերը՝ որպես Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման իրավա-քաղաքական հիմք, «Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման հիմնախնդիրներն ու հեռանկարները» 2-րդ միջազգային երիտասարդական գիտաժողովի նյութերի ժողովածու, 2017թ., էջեր 78-86,

11. Նախագահի ինստիտուտը նոր Հայաստանի տեսլականում «Հայ հասարակության զարգացման հիմնախնդիրներն արդի ժամանակաշրջանում. Մարտահրավերներն ու դրանց լուծումները» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ, 2019թ., էջեր 301-316:

АРТАШЕС АРТАВАЗДОВИЧ ХАЛАТЯН
ОСНОВНЫЕ ВОПРОСЫ ЭВОЛЮЦИИ ФОРМЫ ПРАВЛЕНИЯ В ТРЕТЬЕЙ
АРМЯНСКОЙ РЕСПУБЛИКЕ

РЕЗЮМЕ

Диссертация посвящена проблематике развития системы правления в Третьей армянской республике. Актуальность данной темы обусловлена, с одной стороны, крупномасштабными конституционными изменениями и, в частности, сменой полупрезидентской системы на парламентскую, а, с другой стороны, сравнительно малым количеством научных работ на эту тему. В результате, теоретические и практически основы и свойства формы правления и ее влияние на политическую жизнь в государстве, а также воздействие фактических политических и юридических институтов на выбор и функционирование формы правления не являются предметом широких научных и практических дискуссий, не смотря на их колоссальное значение для нормального функционирования государства и реализации поставленных властью политических задач.

Одна из главных особенностей эволюции системы правления в Республике Армения - апробация практически всех основных вариаций республиканской формы правления: президентской, суперпрезидентской, полупрезидентской и наконец парламентской. Быстрая сменяемость моделей государственного правления говорит о несостоявшейся политической системе, которая еще не обрела ту степень устойчивости и преемственности, которые пресущи, например, западно-европейским демократиям.

В данном контексте следует отметить, что исследование эволюции системы правления в Армении в данной диссертационной работе основано не только на формальных правовых предписаниях, но так же на иных важных факторах, влияющих на форму и содержание отношений между властными институтами. Такими факторами, в частности, являются уровень правосознания народа, политическая и конституционная культура, экономическое состояние страны, в том числе качество распределения народного богатства, наличия внешней угрозы безопасности государства и т.д..

Основываясь на данной формуле произведен анализ форм правления в Армении и их эволюции. В результате автором было сделано заключение, что сосредоточение властных полномочий в руках президента страны имело объективные причины, такие как зачаточное состояние партийной системы, наличие военного конфликта с Азербайджаном, который требовал милитаризацию общества и экономики, а так же принятия оперативных решений, необходимость проведения системных экономических и правовых реформ и т.д.. Не взирая на упомянутые факторы, политическая система Армении так или иначе и с переменным успехом развивалась в сторону плюралистических и коллегиальных политических институтов, что сказывалось на векторе дальнейших конституционных поправок

вплоть до перехода к парламентской системе правления.

Помимо анализа взаимного влияния правовых форм правления и политических институтов автором данной научной работы осуществлен правовой анализ сугубо конституционных институций каждой из форм правления в Армении в течение более чем двадцатилетнего периода конституционной эволюции.

Исходя из важности конституционных поправок 2015г. для архитектуры системы власти в Армении, автором был сделан особый акцент на исследовании новой парламентской формы правления, закреплённой в Конституции с точки зрения как формальных конституционных институтов, так и политических, правовых, исторических и иных предпосылок внедрения парламентского правления. В частности, автором сделан вывод, что конституционные основы парламентаризма и парламентской системы заложены в Декларацию независимости Армении от 23-ого августа 1990-ого года, следовательно, дальнейшие конституционные предписания противоречат Декларации независимости, как основополагающему документу конституционной системы Армении.

Кроме того, исторически Армения была приспособлена к коллегиальной системе правления как в средние века во время национальных собраний и церковных соборов, так и в дальнейшем. В частности, армянская политическая мысль обосновывала важность парламентской системы для будущей независимой Армении. Парламентарно-коллегиальная система правления была одним из основных программных пунктов первых армянских партий, а также институциональной базой для Первой и Второй Армянских Республик.

Автором доказывается, что вышеупомянутые факторы в купе с необходимостью дальнейшего развития демократических коллегиальных институтов и установления нового статуса кво внутри политической элиты привели к пересмотру Конституции и установлению парламентарной республики. В данном контексте автор опирается на теорию элит, как основной теоретический базис для анализа новой системы правления.

Автор также проделал обширный юридический анализ новой системы правления с точки зрения конституционных норм и гарантий политико-правовых отношений между высшими конституционно-властными институтами государства. Особое внимание было уделено тем, по мнению автора, коллизиям, пробелам и системным рискам, которые содержит модель властной системы, которая получила конституционное и, в дальнейшем, так же законодательное закрепление, а также конституционно-правовому анализу соответствующих политико-правовых реалий.

На основе проведенного анализа автором были сделаны соответствующие заключения.

ARTASHES ARTAVAZD KHALATYAN

MAIN ISSUES OF EVOLUTION OF THE FORM OF GOVERNMENT IN THE THIRD ARMENIAN REPUBLIC

ABSTRACT

This research thesis is dedicated to the issue of evolution of the system of government in the Third Armenian Republic. Urgency of the selected topic is conditioned by large-scale constitutional amendments, occurred in Armenia, particularly, including the shift from semi-presidential system of government to parliamentary democracy and by comparatively small number of scientific works on this issue. As a result theoretical and practical bases and features of a governmental form, their influence on political life of the country, as well as the impact of de facto political and legal institutions on the choice and functioning of the form of government are not subject of large scientific and practical discussions, despite their huge importance for normal functioning of the state and realization of its political tasks.

One of the main peculiarities of evolution of the system of government is practical application of all main types of democratic governance: presidential, superpresidential, semipresidential and parliamentary. Frequent substitution of governmental models is a vivid evidence of malfunctioning political system, which does not yet have satisfactory level of sustainability and continuity, that exists in Western democracies.

Within this context it is worth mentioning that the research of evolution of state government in Armenia in the dissertation is based not only on formal legal stipulations, but also on important factors, which influence the form and content of relations between power institutions. Such factors are: level of legal conscience of the people, political and constitutional culture, economic situation, including quality of distribution of social wealth, existence of external danger to state security etc.

Based on the analysis made, the author has concluded that concentration of influential powers in the hand of president had objective reasons, such as newly emerged and undeveloped party system, the military conflict with Azerbaijan, which led to militarization of the society and economy and required adoption of operative decisions, lack of systemic economic and legal reforms etc.

However, in spite of these factors and with changing patterns of success Armenia developed towards advancement of pluralistic and collegial institutions. This fact contributed to the vector of further constitutional amendments, the final accord of which was establishment of the parliamentary form of government.

Besides analysis of mutual influence of legal forms of government and political institutions the author of this scientific work has performed legal analysis of pure constitutional institutions of each form of government in Armenia during more than twenty- five year evolution.

Taking account of importance of constitutional amendments of 2015 for architecture of the system of power in Armenia, the author has specifically accentuated the research of the new parliamentary form of government in terms of formal constitutional institutions, as well as political, legal, historical and other prerequisites of this constitutional amendment. In particular, the author has concluded, that constitutional bases of parliamentarism and parliamentary system are embedded in the Declaration of Independence of Armenia of August 23 1990. Consequently, further constitutional stipulations contradict the Declaration of Independence, as an essential document for the whole constitutional system of Armenia. Besides, historically Armenia was inclined to collegial system of government, including medieval time national assemblies and church cathedrals and further developments. Also, Armenian political thought justified importance of parliamentary system of government for future independent Armenia, as well as parliamentary system of government was included in the political programs of the first Armenian parties and served as an institutional framework of the First and the Second Armenian Republics..

The author substantiates, that aforementioned factors together with necessity of further development of democratic collegial institutions and establishment of new status que inside political elite have entailed revision of Constitution and establishment of the parliamentary republic. In this context the authors refers to the theory of elites, as a main theoretical tool for consideration of transformation of existing political system.

The author has also made profound legal analysis of the new system of government in terms of constitutional norms and guarantees of political-legal relations between supreme constitutional institutions of state. Spesific attention has been paid to collisions, gaps and systemic risks, that, according to the author, newly established constitutional system of government contains, as well as to the constitutional analysis of current political and legal developments.

Based on analysis performed, the author has set forth relevant conclusions.